մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

*

* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին ուղղվեց նաև հետևյալ ողջույնի հեռագիրը.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց» Հայոց աշխարհի Միածնաէջ Սուրբ Սեղանից:

Մեծ ուրախությամբ ողջունում ենք Ձեզ մեր Փրկչին Հիսուսի Քրիստոսի Հարության հրաշալի ավետիսով, որ լույս է սփռում մեր բոլորիս կյանքի ճանապարհին, մեր խոհերին ու մեր ձեռաց գործերին, առավել ամրապնդելով մեր հոգիներում «զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան»:

Սուրբ Հարության կենարար շնորհները թող առատապես բաշխվեն նաև Ձեր տիրախնամ թեմի տարածքի վրա, Ձերդ Սրբազնության, ձեր եկեղեցյաց հոգևոր սպասավորներին, թեմական և համայնքային խորհուրդներին և համայն հավատացյալ Մեր զավակներին:

Հայրական սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*

* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: